



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԼՈՒՍԱԼՈՐԻՉ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՆՈՒԱՃԵՑ ՍԻՐՏԵՐՆ ՈՒ ԲԵՄԸ

Ազգային Առաջնորդարանի «Լուսալորիչ» երիտասարդական երգչախումբը Հինգշաբթի, 25 Յունիսի երեկոյեան նուաճեց սիրտերն ու հոգիները երաժշտասեր, ազնիւ երաժշտութեան համակիր բազմահարիւր հայորդիներու, որոնք Կլենտէյլի «Փրեսպիթերիըն» եկեղեցւոյ մէջ ժամադրուած էին հայ երգի տարբեր բնագաւառներէն կազմուած յայտագիրի մը հետ, երաժշտական ծաղկաքաղի մը, որ գեղեցկօրէն մատուցուեցաւ բացառաբար երիտասարդներով կազմուած խումբին կողմէ:

Ընդամենը 24 երգերէ կազմուած յայտագիրին իւրաքանչիւր երգը, մենակատարներն ու երաժիշտները երկար ծափողջոյններով գնահատուեցան ներկաներուն կողմէ, որոնք խմբավարին՝ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի հետ միասին արժանի եղան բարձր գնահատանքի:

Համերգը, որ կազմակերպուած էր մեր եկեղեցիներու երիտասարդական միութիւններու վարիչ կազմին կողմէ, կը վայելէր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Ներկայ էին հոգեւորականաց դասու, Ազգ. Վարչութեան, միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ աւելի քան հազար երաժշտասերներ, որոնք ամբողջութեամբ լեցուցած էին սրահը:

Յայտագիրին մանրամասնութիւններուն մասին խօսելէ առաջ, կ'ուզենք կանգ առնել քանի մը յատկանշական իրականութիւններու վրայ, որոնք բաժին ունին այս ձեռնարկին յաջողութեան պսակի կազմութեան մէջ:

Նախ եւ առաջ, «Լուսալորիչ» երգչախումբին ելոյթը գործնական ընդառաջում մըն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին, որ 2009ը հռչակած է երիտասարդութեան Տարի: Արդարեւ, կարելի՞ է երեւակայել աւելի գեղեցիկ նախաձեռնութիւն մը, նշելու համար երիտասարդական տարին, քան այն, որ 44 երիտասարդներ ու երիտասարդուհիներ ի մի գան, ամիսներ շարունակ, յարատեւութեամբ ու յանձնառութեամբ հետեւին փորձերու, սորվին հայ երգի գանձարանին պատկանող հոգեւոր, ազգային, հայրենասիրական ու ժողովրդային երգեր, որոնցմէ աւելի քան հինգը առաջին անգամ ըլլալով պիտի հնչէին այս համերգին...: Յետոյ, պետք է վեր

առնել այն իրականությունը, որ այս համերգը, իր գեղարուեստական թե կազմակերպչական բաժիններով, առաւելաբար իրականացաւ նոյնինքն երիտասարդներուն կողմէ: Անոնք գործնապէս ապացուցին, որ յանձնառու եւ պատասխանատուութեան զգացումով տոգորուած երիտասարդութեան մը պատրաստութեան համար ի գործ դրուած աշխատանքը անպայման կ'արդիւնաւորուի, երիտասարդը պատրաստ է յանձն առնելու մշակոյթի ու գեղարուեստի ջահը, որ իրեն կը փոխանցուի երեք սերունդին կողմէ, գուրգուրանքով, հոգածութեամբ ու խանդաղատանքով: Ու եթէ Առաջնորդ Սրբազանին, Թեմիս ժողովականութեան ու գործակիցներուն կողմէ ցուցաբերուած այդ գուրգուրանքը գտաւ իր արդարացումը, այս իրագործման մէջ կարելի չէ անտեսել խմբավար Յայր Սուրբին հետեւողական աշխատանքն ու նուիրումը, որ նմանապէս լուրջ կենսագործում ապրեցաւ անցեալ ամիսներուն, խումբին ու մենակատարներուն հետ սպառիչ ու քրտինք խլող փորձերու ճամբով:

ՅԱՅՏԱԳԻՐԸ

Բնականաբար ոչ մէկ նկարագրական, յատկապէս երաժշտական իրականացումի մը մասին, չի կրնար փոխարինել անձնական ներկայութենէ քաղուած տպաւորութիւնը: Իսկ յայտագիրը ճոխ էր ու կազմուած՝ հայ երգի տարբեր երանգներով՝ եկեղեցական, ազգային ու ժողովրդային գոյներով:

Բացումը կատարուեցաւ Տերունական Աղօթքով, որուն ընդմէջէն, երգչախումբը սրահին մէջ առաջին իսկ վայրկեանէն ստեղծեց ամբողջ յայտագիրին պահանջած մթնոլորտն ու բեմ-հանդիսական հաղորդականութիւնը:

Ամերիկեան ու Յայաստանի Զայլերգներուն կատարումէն ետք, ողջոյնի խօսք արտասանեցին Սուրեն Յազարեան (անգլերէնով) եւ Մերի Մելքոնեան (հայերէնով): Անոնք նշեցին, որ այս համերգը կը ձօնուի Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140ամեակին: Յետեւաբար, պատահական չէր, որ կոմիտասեան ժառանգութիւնը կարելոր տեղ ունէր յայտագիրին մէջ:

Առաջին մասի առաջին եօթը երգերը քաղուած էին եկեղեցական ու հոգեւոր երգերու անդաստանէն: Անոնցմէ հինգը առաջին անգամ ըլլալով կը հնչէին մեր բեմին վրայ: Յաջորդեց ժողովրդական երգերու շարք մը, որ հանդիսականը փոխադրեց Կոմիտասեան դասականներու մթնոլորտը: Միջնարարէն ետք, յայտագիրի երկրորդ բաժինով հրամցուեցան ազգային-հայրենասիրական երեք երգեր, իսկ վերջին բաժինով խումբը հանդես եկաւ հայկական չորս դասական երգերով:

Երգերուն կատարումը յաջող էր ու ներդաշնակ: Առաւելաբար սիրողական անդամներէ կազմուած խումբը ձգտեցաւ տալ իր առաւելագոյնը, որուն համար արժանի է գնահատանքի ու քաջալերանքի: Յատուկ գնահատանքի արժանի են մենակատարները՝ Սուրեն Յազարեան, Մերի Մելքոնեան, Բնարիկ Ներկարարեան, Կարօ Քիլեճեան եւ Սուրեն Մկրտչեան, առանց մոռնալու խմբավար Յայր Սուրբին մենակատարութիւնները: Տպաւորիչ ու ներգրաւող էր Բնարիկ Ներկարարեանի ու Մերի Մելքոնեանի կատարողութեամբ զուգերգը՝ «Խօսք

Իմ Որդուն» երգին մէջ, ինչպէս նաեւ Էտնա եւ Էլենա Քարիմեան քոյրերու զուգերգը՝ Կոմիտասի «Ալագեազ, Քեզի Մեռնիմ» երգի կատարումով: Չապէլ Չօպուեան, ջութակով իր ընկերակցութեամբ, այլ խորք մը տուաւ որոշ երգերու մատուցման: Պէտք է առանձնաբար անդրադառնալ դաշնակարուհի-երգեհոնահարուհի Արմէնուհի Տէրտէրեանի մասնակցութեան. ան կարելոր ներդրում ունեցաւ համերգի յաջողութեան մէջ, ու հանդիսականը իմացաւ որ ան մասնակցութիւն բերած է նաեւ համերգի պատրաստութեան «սեւ աշխատանք»ին. անոր կատարումը գեղեցիկ գիծ մը աւելցուց համերգի գունագեղ համայնապատկերին մէջ:

«ՊԱՅՃԱՌ ԵՒ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ»

Համերգի յայտագիրին աւարտէն առաջ, գնահատանքի ու օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Առաջնորդ Սրբազանը: Մեկնելով ներկայացուած երգերէն՝ «Տէր, կեցո՛ր դու զհայս»ի բառերէն, ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց, թէ երգչախումբի անդամները պայծառ ու շնորհալի երիտասարդներ են, որոնք արդարացուցին իրենց կապուած յոյսերը, ծաղկեցուցին մաշտոցեան աւանդներն ու ժառանգութիւնները, ու պատիւ ապահովեցին իրենց ու սերնդակից երիտասարդութեան:

Առաջնորդ Սրբազանը յատկապէս ողջունեց ու գնահատեց խմբավար Հայր Պարթէւը՝ իր նուիրեալ աշխատանքին ու ձեռք բերած արդիւնքին համար, որուն մասնակից են ու բաժնեկից՝ խումբի անդամները, մենակատարները, դաշնակահարն ու կազմակերպիչ վարչականները:

Առաջնորդ Սրբազանը գոհութիւն ու փառք տուաւ Աստուծոյ, որ պարգեւեց այս յաջողութիւնը: Ան յիշեցուց, որ Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երգչախումբը կազմուած էր ութ տարի առաջ, Հայաստանի մէջ Զրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով, կը համախմբէր շուրջ 100 անդամներ՝ երիտասարդ ու երէց սերունդներէն: Այս հանգրուանին, խումբը բացառաբար կազմուած է երիտասարդներով, որոնք ահաւասիկ գործնապէս կը մարմնաւորեն Վեհափառ Հայրապետին պատգամը՝ երիտասարդութեան Տարուան առիթով, պերճախօս կերպով կը թելադրեն, որ մեր ժողովուրդը, մեր եկեղեցին կրնան օգտուիլ իրենց ձիրքերէն, շնորհքներէն ու երիտասարդական խանդավառութենէն: Ան աւելցուց, որ երէց սերունդները, իրենց կարգին, պարտականութիւնը ունին հոգածու վերաբերմունք ցուցաբերելու երիտասարդութեան, լսել զայն, վստահիլ անոնց ու պատրաստել ապագայի ազգային առաջնորդները: Առաջնորդ Սրբազանը ընդգծեց, որ այս երեկոյի վայելքը խորքին մէջ արդիւնք էր ամիսներու աշխատանքի, որոնք նաեւ առիթ եղան հոգեւոր սնունդ մատակարարելու անդամներուն: Վերջապէս, ան քաղուածքներ կատարեց երիտասարդութեան Տարուան առիթով Վեհափառ Հայրապետի պատգամէն, ուր, Պետրոս Առաքեալի բառերով՝ զգուշութեան յորդոր կ'ուղղուի մեր երիտասարդութեան, որպէսզի զգոյշ ըլլայ ու չիյնայ դարանակալ սատանային որոգայթներուն մէջ, նկատի ունենալով, որ գառնուկի մորթով քողարկուած սատանան միշտ պատրաստ է որսալու անմեղ երիտասարդը:

Առաջնորդ Սրբազանը իր խօսքին վերջին բաժինով ողջոյնի ու գնահատանքի խօսք ուղղեց խումբի անդամներու ծնողներուն ու ընտանեկան պարագաներուն, ապա նաեւ Կրօնական Ժողովի, Ազգ. Վարչութեան ու միութեանց ներկայացուցիչներուն, որոնք խուռներամ ներկայութեամբ գործնական քաջալերանք արտայայտեցին խումբին: Ան թելադրեց աչքի բիբի պէս պահպանել ու հոգածու ըլլալ խումբին ու երիտասարդութեան, միասնաբար շարունակել յարատեւ վերանորոգութեան ուղին:

Առաջնորդ Սրբազանին խօսքէն ետք, «Լուսավորիչ» երգչախումբը «Կիլիկիա»ով ու Հայրապետական մաղթանքի կատարումով եզրափակեց յիշատակելի համերգը:

Ազգ. Առաջնորդարանիս ու մեր Թեմի մշակութային իրագործումներուն վրայ կարելոր գիծ մը աւելցնող երեկոն վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին պահպանիչով:

PRELACY “LOUSAVORICH” YOUTH CHOIR PERFORMS TO GREAT ACCLAIM

On Thursday, June 25th, 2009, the first concert of the newly formed Prelacy “Lousavorich” Choir took place at Glendale Presbyterian Church, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Youth Group Central Directorate.

The choir, comprised of forty-five youth and led by Very Rev. Fr. Barthev Gulumian, presented a repertoire of songs from a variety of genres including spiritual, folk, patriotic, and traditional, which was received with great acclaim by the over 800 community members in attendance.

The concert began with the singing of the Lord’s Prayer and the American and Armenian national anthems, followed by welcoming remarks by choir members Suren Hazarian in English and Merri Melkonyan in Armenian. Both noted that the concert was dedicated to the 140th anniversary of the birth of Gomidas Vartabed, thus it came as no surprise that many of the songs in the program were those written and arranged by Gomidas Vartabed.

A total of 24 songs were presented in two parts. The first part of the program was comprised of spiritual and folk songs, and the second, of patriotic and classical songs, with each song receiving great applause from the audience.

The choir, which had been preparing for the concert for nearly a year, surpassed all expectations, giving a beautiful and moving performance. Worthy of mention are soloists Suren Hazarian, Merri Melkonian, Kenarik Nerkarayan, Garo Kiledjian, and Suren Mkrtychyan, violinist Raquel Zabounian, and pianist/organist Armeni Terteryan who was vital to the success of the concert.

The concert concluded with the singing of the Cilician and Pontifical anthems, prior to which the Prelate was invited to deliver his message and blessings. The Prelate highly commended the performance and the youth for bringing to life our musical legacy, justifying the hopes that are placed in them and bringing pride to all. The Prelate especially commended Very Rev. Fr.

Barthev Gulumian for the months of hard work he devoted to preparing the youth and for the beautiful performance that was the outcome of his efforts. The Prelate noted that the "Lousavorich" Choir was first formed eight years ago on the occasion of the 1700th anniversary of Christianity in Armenia, and how it was re-formed last year as a youth choir in response to the proclamation of 2009 as the Year of the Youth by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. Lastly, he commended the parents, families, Pastors, and Boards of Trustees for their care and encouragement of our youth, as well as all those in attendance for their support, urging them all to continue to nurture and encourage our youth to ensure they are well prepared to be our future leaders.

The evening concluded with the benediction by the Prelate.